

հաստատել որ, համահայրութիւնը ու ազգակցութիւնը մարդկային հասարակութեանց ամենահին կապն է :

Ազգակցութիւնը նկատուած է իբր հիմք մարդկային ընկերութիւններու : Բայց կայ ուրիշ նոր տեսութիւն մ'եւ որ կ'ընդունի, թէ ե. ցեղ մը ամենէն առաջ ազգակցական միութիւն մ'է, բայց միանգամայն երբ չիոթ պարագաներու բերմամբ իր հետ առած է և տարբեր ընտանիքի ցեղեր, հասարակական կազմը ստացած է քաղաքական իշխանութեան և պետութեան կազմութեան մը երեւոյթ. ու այս՝ չնորհիւ ընկերական մեծ կերպարանափոխութեան մը, որ այդ հասարակութիւնը տեղի մը վրայ հաստատուելու հարկին մէջ մնացած է : Այս տեսարաններէն մէկը այսպէս դատած է. «Այն վայրկենէն երբ ցեղ մը կը հաստատուի հողի մը վրայ՝ վերջնականապէս այնտեղ ապրելու համար, երկիրը, ուր կը յաջորդէ ազգակցութեանը՝ իբր հիմք ընկերական կազմաւորութեան (*) :

Մէնը նայելով այս իրերաշրջումին կ'ըսէ. «Քաղաքական պատմութիւնը կ'սկսի այն մտքով՝ որ մէկ արիւնէ առաջ եկած հասարակութիւն մը արեւնական հասարակութեան միակ հիմն է, ինչպէս և Քաղաքական դերի հասարակութեանը. բայց ոչ մէկ տակնուվրայութիւն այնքան կատարեալ չեղաւ՝ որքան վրայ հասած այն փոփոխութիւնը՝ երբ միեւնոյն հողի վրայ բնակութեան սկզբունքը հաստատուեցաւ առաջին անգամ իբր հիմքաղաքական հասարակութեան» :

Ահա այս երկու տեսակէտները աչքի առաջ ունենալով՝ մենք պիտի սկսինք Քիւրդերու պատմութեանը մէկը արեւնակցական, միւսը հողի մը վրայ բնակելու տեսակէտէն, հետեւաբար մեր պատմութիւնը լինելով Քիւրդերու պատմութիւնը՝ միեւնոյն ժամանակ Քիւրդ-Հայ պատմութիւն է, Հայկական երկիրներու դրացիութեան ու հայկական երկիրներու մէջ միասին գտնուե-

(*) Théories Modernes sur les Origines de la Famille etc. par Adolphe Possadâ.